ՀՏԴ : 929:78(479.25) Մանսուրյան

Doi:10.54503/0135-0536-2025.2-284

ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ. Տիգրան Մանսուրյան, *Երևան, «Գիտություն» հրատ., 2025, 223 էջ + 32 էջ նկ.*:*

Բանալի բառեր՝ Տիգրան Մանսուրյան, ազգային, Կոմիտաս, խմբերգային, նվագարանային, ստեղծագործություն, ժառանգություն:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է ընծայվել ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող Աննա Արևշատյանի «Տիգրան Մանսուրյան» մենագրությունը: Այն նվիրված է կոմպոզիտորի 85-ամյակին: Բաղկացած է ինը գլխից, նախաբանից, վերջաբանից: Ամփոփումը եռալեզու է: Գիրքը համալրված է գիտական ապարատով, որ կազմում են կոմպոզիտորի երկերի ցանկը, գրքի մատենագրությունն ու լուսանկարների բաժինը:



Այն հանգամանքը, որ Տ. Մանսուրյանն արդի ամենասիրված և ամենահամբավավոր հայ արվեստագետներից է, նրա մասին գրված բազում հոդվածներն ու ակնարկները դարձնում է անբավարար. նրան նվիրված համապարփակ մենագրության կարիք վաղուց կար:

Գիրքը հասցեագրված է թե՛ մասնագետներին, թե՛ երաժշտասերներին: Այս ցուցումը, թերևս, աշխատության կարևոր բնութագրիչներից է: Նախաբանում էլ հեղինակը՝ Ա. Արևշատյանը, հատուկ ընդգծել է իր նպատակի՝ ոչ նեղ ակադեմիական բնույթը (էջ 12)՝ այն պայմանավորելով Տ. Մանսուրյանի անհատականության և արվեստի հանդեպ մեր հասարակության լայն շերտերի սիրով ու հետաքրքրությամբ: Ինքնին հասկանալի է, որ այս դեպքում սոսկ թիրախային շրջանակներին հասու, մասնագիտական դժվարամարս վերլուծություններից խուսափելը խնդիրը չէր լուծի. անհրաժեշտ էր պատկերավոր լեզվով կենդանի պատումի աշխույժ շարադրանք ստանալ, ինչն Ա. Արևշատյանին լիովին հաջողվել է: Սակայն մասնագիտական դատողությունների, անհրաժեշտ վերլուծական դրվագների պակաս գրքում ևս չկա: Երաժշտագետը իրար հյուսելով պատմում է կոմպոզիտորի թե՛ կյանքի, թե՛ արվեստի մասին՝ արծարծելով նաև մասնագիտական հասկացություններ, երաժշտական արվեստի պատմության մեջ երևացած գեղագիտական, ստեղծագործական երևույթներ և կոմպոզիտորական տեխնոլոգիաներին առնչվող բազում հարցեր:

* *Ներկայացվել է 16. III. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

Գրքի առաջին, երկրորդ ու իններորդ գլուխները նվիրված են Տ. Մանսուրյանի կենսագրականին և աշխարհայեցողական, գեղարվեստական ընկալումների հստակեցմանը: Դրանք շարադրված են կոմպոզիտորի ստեղծագործական ուղու, շրջադարձային նշանակության ստեղծագործությունների, հիշարժան կատարումների և համաշխարհային արտիստների հիշատակմամբ: Մյուս վեց վերլուծական գլուխներն էլ, որ բաժանված են կոմպոզիտորական արվեստի ժանրային ոլորտների երաժշտագիտական դասիչներով, նաև կյանքի պատում են, որում գեղարվեստի մարդու կյանքն ու գործը գիրկընդխառն պատկերավորում են ստանում:

Տ. Մանսուրյանի կենսագրական ակնարկից (առաջին գլուխ) ընդհանրանում է XX դարի հայ մարդու հավաքական մի ճակատագիր, որ հյուսվում է Սկյուռքում (Բեյրութ, Լիբանան) հայրենակորույս մարդկանց ընտանիքում ծնված ապագա կոմպոզիտորի մանկական երազական աշխարհի թանկ ծվեններից, ապա հայրենաղարձված հայի հիասթափություններից և դժվար պատանեկության բավիղներով դեպի կայացում, հասունացում և համաշխարհային ճանաչում տանող ընթացքից: Եթե իր՝ կոմպոզիտորի խոսքը (էջ 179) փոքր-ինչ փոխենք, ապա կստացվի, որ սա «ծովի մարդուց»՝ «լեռան մարդու» փոխակերպման պատմություն է. բայց «ծովը» կմնա ...

Ստեղծագործ մարդու անհատականության բնութագրման գործում մեծ կարևորություն ունեն նրա ուսման տարիները և ուսուցիչները, աշխարհայացքի հիմնատարրերն ու գեղարվեստական միջավայրը: Տ. Մանսուրյանին նվիրված մենագրության մեջ ևս դրանք կարևորված են՝ Գյումրու (Լենինականի) տարիներից մինչև Երևանի Ռ. Մելիքյանի անվան ուսումնարան, ապա Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա: Ապագա կոմպոզիտորի կայացման ճանապարհին հատկապես ընդգծված է իր ուսուցչի՝ կոմպոզիտոր Ղազարոս Սարյանի դերը և Սարյան ընտանիքի մթնոլորտը (էջ 15–18): Գեղարվեստական միջավայրը, որում բյուրեղացել է Տ. Մանսուրյանի անհատականությունը, XX դ. 60-ականների խորհրդային արվեստի իրականությունն է՝ կոմպոզիտորների, կատարողների և երաժշտագետների, գրողների ու նկարիչների, վաղուց կայացած խոշոր վարպետների և ասպարեզ իջնող ըմբոստ նորարարների ստվար փաղանգով, որոնցից շատերի հետ Մանսուրյանը մտերմություն ուներ և կենսագրություն ապրեց:

Տ. Մանսուրյանի գեղարվեստական աշխարհայացքը կայացավ եվրոպական ավանգարդիզմի, ընդ որում, դրա երկու փուլերի և ազգային երաժշտության խորքային ընկալումների հատույթում: Այս երևույթն արժանացել է Ա. Արևշատյանի հատուկ ուշադրությանը (երկրորդ և իններորդ գլուխներ): Հեղինակը զուգադիր շարադրանքով ներկայացրել է XX դարասկզբի եվրոպական նորարարական շարժման ոճական տարասեռ հոսանքների հակիրճ բնութագրերն ու դրանց վերախմաստավորման ձգտումները դարի երկրորդ կեսի խորհրդային իրականության մեջ. Արևմուտքի հետպատերազմյան գեղարվեստական իրողությունների ներհակ բնույթը, որ նորարարական էր թե՛ դարասկզբին ձևավորված գաղափարական դիրքորոշումների առումով և թե՛ ավելին՝ հենց այդ դիրքորոշումներին հակադրվելով: Դա նոր ձևակերպվող պոստմոդեռնի գաղափարական ետնախորքն էր, որ Ա. Արևշատյանը կոմպոզիտոր Դյորդ Լիգետիի մեկ ձևակերպմամբ ընդգծել է իր մենագրության էջերում (էջ 37–38): Մանսուրյանի

գեղարվեստական ընթացքն այդ ետնախորքի վրա երաժշտագետի կողմից հստակ է ձևակերպված՝ 1970–1980-ականներին արևմտյան ու ազգային ընկալումների օրգանական սինթեզից մինչև 1990–2000-ականների տիրույթը, երբ առավել չափով ազգային թանձրացումները դարձան կոմպոզիտորի անհատական գրելաոճի ողնուցը (էջ 38–39): Առաջինի համատեքստում տրվում են Դեբյուսիի, Ստրավինսկու, Բարտոկի, Նոր վիեննական դպրոցի մեծերից՝ Շյոնբերգի, Բերգի, Վեբերնի, ապա՝ Բուլեզի և այլոց անունները, մյուս կողմից՝ Կոմիտասի ... Մանսուրյանական ոճի արդի փուլի արտահայտությունները, արդեն, ազգային ձայնակարգային և ձայնեղանակային արմատներից սնվող, ազգային մոդալ համակարգերից կերպարանք առնող գեղարվեստական երևույթներ են:

Ազգայինի և համամարդկայինի փոխառնչության հարցը, որ խիստ օրինաչափորեն ի հայտ է գալիս մեծ արվեստագետների ժառանգության մեջ, մանսուրյանական արվեստի առիթով այլ ծալքեր էլ ունի: Դրանք արժանի կերպով ընդգծվել են Ա. Արևշատյանի կողմից, և հանգույցը դարձրել ողջ գրքի կարևոր առանցքներից մեկը:

Որպես աշխարհայացքային մեկնակետ «Կոմիտաս» երևույթը կարևորված է Տ. Մանսուրյանի համար. նախ, որպես XX դ. մեծ կոմպոզիտոր, բայց նաև երաժշտական արվեստի հիմնահարցեր ձևակերպած և լուծումներ առաջադրած մտածող: Այս իմաստով նրա համար հոգեհարազատ ընդհանրություն, աշխարհընկալման զուգահեռականություն ձևավորող հանգամանք է հայոց լեզվի և նրան համարժեք եղանակավորման հիմնատարրերի հանդեպ Կոմիտասի ունեցած գիտական-գեղարվեստական դիրքորոշումը: Դա, թերևս, «ազգայինի» հանգուցակետային բանալիներից է, որ ազգային դպրոցի հիմնադիրը թողել է իրեն հաջորդող խոշոր կոմպոզիտորներից այս մեկին՝ Տիգրան Մանսուրյանին (էջ 180):

Կոմիտաս-Մանսուրյան հարաբերության համատեքստում Ա. Արևշատյանն էլի ընդգծումներ ունի, որ ուշարժան են: Սակայն լեզվամտածողության և երաժշտական մտածողության համարժեքայնության հարցերը, որոնք հրապարակ են նետվել դեռևս XIX դարավերջից, դարձել ազգային դպրոցների ընութագրիչ հատկանիշ և հումանիտար գիտություններին հետաքրքրող հիմնահարց, նաև գեղարվեստական մտածողության հզոր լիցքեր պարունակող դաշտ են ձևավորել: Այդ լիցքերի փայլատակումները Տ. Մանսուրյանի արվեստում բազմաթիվ են: Կոմպոզիտորի արվեստի առանցքային նշանակության ոլորտներից երկուսը՝ վոկալ-նվագարանային և խմբերգային ժանրային դաշտերը, հենց այս հարաբերության տարբեր առանցքների շուրջ ձևակերպված դարձդարձումներ են: Ա. Արևշատյանը ճշգրիտ շեշտառումներ է անում, երբ XX դ. 60-ականների նորարարական միտումների հիմնական ժանրային ոլորտներից առանձնացնում է կամերայինը: Այդտեղ և հաջորդ էջերում էլ (երրորդ և չորրորդ գլուխներ) ընդգծվում են վոկալ-նվագարանային, խմբերգային և վոկալ-սիմֆոնիկ այն ստեղծագործությունները, որոնք հեղինակը ստեղծել է հայ քնարերգության ատաղձով՝ որպես ազգայինի հայտանիշ: Եթե շարունակենք մտածել այս հունի մեջ, ապա ակնհայտ կդառնա, որ հայոց լեզվի գրական բոլոր շերտերի հնչավորումը Մանսուրյանի համար ստեղծագործական խնդիր է և ցայսօր գեղարվեստականորեն կատարյալ երկեր կերտելու առիթ է տալիս: Այս տեսանկյան տակ կարող են դիտարկվել Թումանյանի, Իսահակյանի, Տերյանի, Չարենցի, Կ. Զարյանի պոեզիայի երաժշտական մարմնավորումները, որպես աշխարհաբար հայերենի «երաժշտականացում»: Սակայն մյուս կողմից, 60-ականների երկրորդ

կեսին Մանսուրյանն առաջիններից էր, որ դիմեց հայ միջնադարյան քնարերգության օրինակներին՝ Խաչատուր Կեչառեցու, Նահապետ Քուչակի (նրան վերագրվող) պոեզիային, ապա վերջին շրջանում՝ Ներսես Շնորհալու, Մեսրոպ Մաշտոցի ժառանգությանը: Կարող ենք պնդել, որ «Տեսր ողբագին տաղերգության», «Զորս հայրեն Նահապետ Քուչակից», «Հաւատով խոստովանիմ», «Օրհներգ-նաւապետ բարի» և այլ երկերով Մանսուրյանի արվեստում հնչավորվել են հայոց գրական լեզվի երկու շերտերը՝ միջին հայերենն ու գրաբարը: Այսինքն՝ կոմպոզիտորին հաջողվել է իր երաժշտական մտածողության արտահայտչաձևերով ու միջոցներով ձևավորել հայոց լեզվի ողջ հնչական հիմքի երաժշտական համալիրը:

Սակայն «երգվող» արվեստի հանդեպ կոմպոզիտորի մեծ հակվածությունը պայմանավորված չէ սոսկ հայոց լեզվի և հայ պոետիկ արվեստի հանդեպ ունեցած խոնարհումով: Այդ են վկայում նրա թե՛ օտարազգի բանաստեղծների ստեղծագործություններով, թե՛ օտարալեզու տեքստային հիմքով ստեղծված երկերը: Այս առումով, իհարկե, առանձնանում է «Ռեքվիեմը», որի համար հեղինակը 2013 թ. արժանացավ ՀՀ պետական մրցանակի: Այն լատիներենի և հայ երաժշտության ձայնակարգային, իսկ որոշ դրվագներում ուղղակի ձայնեղանակային արտահայտությունների զարմանալիորեն կենսական համաձուլվածք է: «Ռեքվիեմը» հայ կոմպոզիտորական արվեստի պատմության նորագույն շրջանի կանտատ-օրատորյալ ժանրի ամենամեծ ձեռքբերումներից է: Ուստի ստեղծագործության հանդեպ մենագրության հեղինակի մեծ ուշադրությունն արդարացված է (էջ 68–79):

Լեզվի, խոսքի ուղղակի արտացոլանքներից զատ, որ այդքան կարևորված են Տ. Մանսուրյանի արվեստում, գուցե նույնիսկ դրանցից առաջ, կոմպոզիտորի երաժշտական տարերքի հիմնական ոլորտներից է նվագարանային արվեստը: Ա. Արևշատյանն այն իր ժանրային տրոհումներով բերել է գրքում: Իհարկե, լեզուն, խոսքը, քնարերգությունն այլ արտացոլումներով ներթափանցում են նաև կոմպոզիտորի նվագարանային արվեստ՝ լինեն դրանք երաժշտական մտքի ձևաբանական կազմակերպման (շարահյուսություն) օրինաչափություններ, թե միջնադարյան մոնոդիայի վերարծարծումներ (ինչը կոմպոզիտորն այնքան էլ չի սիրում անել): Սակայն Մանսուրյանի նվագարանային արվեստն այն ոլորտն է, որն արտացոլել է նրա թե՛ նորարարական, թե՛ ազգային նկրտումները: Բնավ միտում չունենալով վերաշարադրել մենագրության համապատասխան (հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ) գլուխները, սոսկ նկատենք, որ 60-ականներին հայ իրականություն ներթափանցած արևմտյան ավանգարդիզմի դրսևորումները որոշ դեպքերում առաջին անգամ Մանսուրյանի արվեստում երևացին: Նոր վիեննական դպրոցի գեղագիտությունն ու կոմպոզիտորական տեխնոլոգիայի սկզբունքներն ավել կամ պակաս արտացոլվեցին նրա 60-ականների երկրորդ կեսին գրված նվագարանային սոնատներում: Սակայն դրա հետ երևան եկան ազգայինի բոլորովին նոր երևակումներ ևս: Օրինակ՝ դաշնամուրային սոնատում չափի հարաբերական բնույթի արտացոլումը, տակտի գծերի բացակայությունը, տեմպային գործոնի երաժշտական ձևագոյացման գործընթացին զուգադիր կազմակերպելու ցուցումը կարող է բացատրվել ինչպես արևմտյան ավանգարդիզմի ուղղություններից մեկի՝ ալեատորիկայի մասնակի արտացոլանքով, այնպես էլ՝ հայկական մոնոդիայի բնուտ հատկանիշով: Վերջապես ազգայինի ծրագրային հղումով են դրոշմված վաղ նվագարանային երկերից «Թովեմը» (1979), վերջին շրջանից՝ «Երեք միջնադարյան տաղերը» (1996–

2004): Եթե առաջինում հայկական մեղեդային մտածողության վաղագույն շերտերի արտահայտվածություն կա (էջ 97–98), ապա վերջիններն ուղղակի միջնադարյան մոնոդիաների հիմքով են կերտված:

Տ. Մանսուրյանի նվագարանային մտածողության մեծակտավ արտահայտությունները սփռված են նրա ստեղծագործական ուղու երկայնքով՝ «Պարտիտայից» մինչև նվագարանային կոնցերտները, ու թեև այսօր հեղինակին առավել հետաքրքիր են երգն ու խմբերգը, նրա նվագարանային ստեղծագործությունները հայ կոմպոզիտորական արվեստի պատմության փայլուն էջերից են:

Ա. Արևշատյանը բնավ չի վրիպել, երբ առանձին գլուխ է նվիրել Մանսուրյանի կինոերաժշտությանը (ութերորդ գլուխ): Շուրջ քսանհինգ տարի այս բնագավառում ծավալած աշխատանքը առիթ էր, որ կոմպոզիտորը համագործակցի հայ կինոյի մեծանուն ռեժիսորների (առանձին ընդգծված է Ս. Փարաջանովի, Հ. Մալյանի, Հ. Հախվերդյանի հետ աշխատանքը), դերասանների հետ, մյուս կողմից՝ ստեղծի կինոերաժշտություն, որ իր կյանքով ապրող, անվերապահորեն սիրված երաժշտական իրողություն է: Վստահաբար կարելի է ասել, որ Տ. Մանսուրյանի ստեղծագործությունների շարքում լիարժեք գեղարվեստականությամբ փայլում են նաև նրա կինոերկերը: Թեև թատերական ներկայացումների և մուլտֆիլմերի համար գրած երաժշտական ստեղծագործություններն անհամեմատ քիչ են, սակայն այստեղ ևս նշանավոր երկեր կան:

Գրքի վերջաբանը կրում է հեղինակ միջնադարագետ-երաժշտագետի ձեռքի դրոշմը: Այն կազմված է «Հարցմունք եւ պատասխանիք» գրվածքների օրինակով: Նպատակը գրքի ասելիքը մի շարք հարցերով հստակեցնել, հայտարարի՝ ի մի բերելն է:

Գիրքը հայ մեծ արվեստագետի, նրա արվեստի, ժառանգության, անհատականության և, պարզապես, հայ մարդու կենսագրության մասին է, որ գրվել է բարձր պրոֆեսիոնալի ձեռքով և այլևս մեզ է պատկանում: Ա. Արևշատյանի «Տիգրան Մանսուրյան» մենագրությունը ոչ միայն հայ մեծ կոմպոզիտորին նվիրված արժանի մենագրություն է, այլև մասնագիտական հարցերի արծարծման, ընթերցողների լայն շրջանակին հասկանալի երաժշտագիտական աշխատանքի օրինակ՝ ստեղծված իր գրքի հերոսին բացահայտելու հիմնական նպատակին հավատարիմ:

ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆ

Արվ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ երաժշտության պատմության ու տեսության հարցեր, հայ երաժշտական միջնադարագիտություն: Հեղինակ է 4 մենագրության և շուրջ 70 հոդվածի: ORCID:0009-0008-1081-1639. mhernavoyan@gmail.com